ՀԱՆԴԷՍ ՏԱՍՆՕՐԵԱՅ

Բ· ՏԱՐՒ Ա· ՇՐՋԱՆ

Երկրագունդն տասն օրը անդամ մը պիտի հրատարակվի ։
Տարեկան գինն է 3 արծաթ մէճիտ կանխիկ ։

Վեցամեայն 2 և Եռամեայն 1 արծաթ մէճիտ ։
Յ Ամսոը մէկ չրջան կը համարուի ։
Առաքադրութիւնք Մայիս 1 ին կը սկսին ։

ԹԻՒ 2 1871 ՄԱՑԻՍ 20

ԱՄՆԱՊԱՏԻՒ ՄԲՈՒԱՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՅՐԻԿ

Մայիս 10 ին կէս օրին առաջ Հայրիկ Վարժարանին այցելութիւն ըրաւ իր հետ ունենալով վիեդիս արժանապատիւ Տէր Գէորգ և Տէր Դանիէլ Քահանայքը ։ Նոքա բոլոր պատարանները և այլ տեղեանք պտըտեցան , յետոյ ճաշի տանեն հանգչեցաւ տեղանաւանն իջնալ և աշակերտաց տեղանակ ցնել ։ Սեղանէն երթալու տանեն աշակերտաց խրատ խօսեցաւ իր սովորական անկեղծ և հայրական լեզուովը և պատանք ի ճմարիտ ուսումնասիրութիւն յորդորեց ։ Ցետոյ ութիւնը վարժարանին պաշտօնեից և աշակերտաց կողմէն շնորհաւորութիւն յայտնեց Հայրիկին թէ այցելութեամբ և թէ միանգամայն տեղանակացութեամբ դիրքնիր պատուասիրելուն և ուրախացնելուն համար ։ Ջ֊ծատնքի առեն Հայրիկ խօսարան հրաւիրեցաւ , որուն առջև աշակերտք կարդաւ կացնած՝ քանի մը ապտպին երգեր երգեցին ։ Երբեմն խնամոն ու եղանակը Հայրիկի սիրտը խանդաղատեցուն , և աչերը արտասուօք լեցուեցան ։ Անկէ ետք Հայրիկ վարժարանիս խորհրդարանը հրաւիրեցաւ , ուր տեսչութիւնը ներկայացուցին՝ աշակերտաց կոզմէն պրուած նամակ մը , յորում աշակերտք իրենց նախկին ընկերութեան պրամպպէնն հաղորդ դրաւշ և նպատաւ ապտպին պատասխ նամակը վարժապետին կը

յայտնէին ։ Ա.ի՝ օրը Հոյրիկ վինչև երեկոյ վարժարանս անցուց ։ Մ՛ծ էր աշակերտաց և պաշտօնէից տրտմութիւնը և աւելորդ է երկարօրէն նկարագրել թէ ի՛նչ քաղցր տպաւորութիւն ըրաւ անոնց վրայ Հոյրիկի պայծառութիւնը ։

Ա.ԶԳԱՅԻՆ

ՄԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՔՆՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

(ՆԻՍՏ Ա.)

Գործադիր Յանձնաժողովս Տեղեկագիրը կարդայաւելէն , Դիւանի անդամոց ընտրութիւնը կատարուելէն , դարձեալ Գործ . Յանձնաժողովոյ պաշտօնին վրայ վէճեր ըլլալն և եթէսիոս . ընտրութեանց ուշանալուն խնդիրը յուզուելէն յետոյ՝ ժողովը անցաւ Սահմանադրութեան վերաքննութեանը ։

Ա.տենապետ Հիւնտին բացատրեց թէ երեք Սահմանադրութիւն կայ և թէ անոնցմէ « մէկը այժմ Ա.զգին օրինքն է » . յետոյ առաջարկեց որ « վերաքննեալ Սահմանադրութեանց առաջիկայ օրինակները երեսխոհանոց դրկուին » ։ (էջ 10)

Մենք անմիջապէս դիտողութիւն ըրինք թէ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութիւնը վերաքննուելուէ , և ոչ թէ վերաքննեալ Ծրագիրը ։ (էջ 10) Ա.պրօ Հիւնտին ալ ըսաւ որ « ներկայ Սահմանադրութեան յօդուածներն մաս առ մաս խոտմ խոտմ երեսխոհանոց քննութեանը յանձնուի ։ (նոյն էջ)

Ս . Նախագահը բուն Սահմանադրութիւնը վերաքննուելուն ընդդիմութիւն մը չի ցուցնելով՝ Ա.պրօ Հիւնտիի առաջարկած վերաքննութեան եղանակին հաւանութիւն չի տուաւ և ուզեց որ վերաքննութիւնը Ժողովոյն մէջ կատարուի ։ (նոյն էջ)

Գարակէօզեան կարծեցաւ Հիւնտին ալ միայն վերաքննութեան եղանակին վրայ խօսելուս և Ս . Նախագահին վրայ խօսելուս՝ Սահմանադրութեանը խիստ դործնական դառնալով՝ յարեց որ Սահմանադրութեան քննելի մասերը յանձնուին Նշանակեալ , որպէս զի երեսխոհանք կանխաւ իրենց դիտողութիւնները պատրաստեն ։ (նոյն էջ)

Խոճասարեան Հիւնտին ենթադրելով թէ երեսխոհանոց մեծ մասը կատարեալ տեղեկութիւն չունի Սահմանադրութեան վերաքննութեան պարագաներուն վրայ՝ առաջարկեց որ Յանձնաժողովոյ ծրագիրը երեսխոհանոց հաղորդուի և անկէ այդ մասին բացատրութիւններ ուզուի ։ (էջ 11)

Փափազեան Մեհրան Հիւնտին ալ նոյն առաջարկութիւնը երկարդեց ։ (նոյն էջ)

Տ . Ա.ղրասխոս վարդապետ Ա.տենապետ Հիւնտիի առած բացատրութեանը վրայ հիմնուելով՝ կը հարցնէ թէ « երբ գործադրութեան մէջ գըտնուած Սահմանադրութիւնը իրր օրինք կը ճանչնայ , միւսներն իրրև ի՞նչ ոյժ ունին » ։ (նոյն էջ)

Մենք դարձեալ կը պնդենք թէ չենք կրնար իրր պարտական ընդունել որ վերաքննութիւնը ծրագիրներուն վրայ կատարուի ։ (նոյն էջ)

Փափազեան Մեհր . Հիւնտին , Ս . Նախագահը և Խրիմեան Կաթողիկոս Հիւնտին Յանձնաժողովոյ ծրագիրը կը պաշտպանեն ։ Իսկ Եսայեան Տիգրան Հիւնտիի որ կողմն ըլլալը ասկէն չի հասկցուիր ։ (նոյն էջ)

Ա.պրօ Հիւնտին այս անգամ ալ յայտնի կերպով 63 ի Սահմանադրութեան կողմը կը գտնուի ։ (էջ 12)

Ա.տենապետ Հիւնտի կը բացատրէ թէ Յանձնաժողովը վերաքննութեան մէջ Բ . Դռնէն եկած

հրամանին հետևած է։ Տ. Ա.մբրոսեան վարդապետ իր հարցմանը կը կրկնէ։ Թարս Գիսակ ալ նոյն խնդիրը լուսաբանելու համար վերաբերեցաւ Յանձնաժողովին Տեղեկագիրը ուղել կառաջարկէ։ Իմիջեան Կարապետ էֆէնտի ալ Ա.տեղապետ էֆէնտիի տուած բացատրութեանը հակառակ կըսէ թէ Յանձնաժողովը իր քննութիւնները ուղիղ 63 ի Ազգ.ժողովի վրայ ըրած է։ Անոնք նորէն կառաջարկեցին որ ժողովը գործադրութեան մէջ եղած Սահմանադրութիւնը ուշադրութեան առնու, իսկ ծրագիրն ու Յանձնաժողովոյ Տեղեկագիրը լուսաւոր թերթերու հանձարէ։ Խօճասարեան էֆէնտի ընդհակառակն, Յանձնաժողովոյ ծրագիրը օրինաւոր վերաքննութեան արդիւնք կընդունի։ Տ. Ա.մբրոսիոս վարդապետ նորէն իր հարցման պատասխան կուզէ։ Եւստաթեան Տիգրան էֆէնտին՝ իրեւ Գիւանին Ա.տենապետը կը պատասխանէ թէ «Գիւանն ուրիշ բան մը չի կրնար ընել, եթէ ոչ՝ կրկնել թէ իր տեղանին վրայ այժմ վերաքննելի Սահմանադրութեան նրւթ օրինակ կը գտնուի; մին՝ այժմու գործադրեալը, միւսը՝ Բ. Գանձն եւ ածը, և երրորդն ալ Մասնաժողովին խմբագրածը։ Եւ կառաջարկէ որ խնդիրը լուծելու համար Մասնաժողովոյ Տեղեկագրին քննութեան։ (Նոյն էջ)

Այս վիճաբանութիւններէն կը տեսնանք որ երեսփոխաններէն ոմանք կառաջարկեն որ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութիւնը վերաքննուի, ոմանք վերաքննութեան գործը որպէս Յանձնաժողովին ձեռօք կատարուած համարելով՝ անոր գործադրութեան վրայ տեղեկութիւն կուզեն, ոմանք ալ վերաբերեալ ծրագիրը կրկին վերաքննել կուզեն։ Իսկ Գիւանը կը յայտնէ գործօնութեան թէ «իր սեղանին վրայ վերաքննելի Սահմանադրութեան երեք օրինակ կը գտնուի»։

Այժ կը հարցնենք այն Երեսփոխան էֆէնտիներուն, որոց համար լուծնելի չհասկնալ և իրենց կարծիքին չհաղորդները ամբաստանելը՝ վատաբանել կը կարծեն կամ այնպէս կարծեցնել կուզեն գործադրեալ անձանց, թէ գործադրութեան մէջ եղած Սահմանադրութեան վերաքննութիւնը պահանջելը նոր կամ օտարոտի խնդի՞ր յարուցանել է, երբ Գիւանը ինք ժողովին երեք (3) վերաքննելի Սահմանադրութիւն կառաջարկէ։

Նկատը գոյ եցաւ և «ո՞րը պիտի վերաքննուին» անորոշ մնաց։

Թարւանակիի.

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ

ՄԻՔԱՅԵԼ ՆԱԼԲԱՆՏԵԱՆ

(Թարւանակութիւն և վերջ.)

Ազ կրօնը և ոչ նաև օրէնադրութիւնը կարող են վրկել մի ազգի բարոյականութիւն, սորա ազբիւրը և չարժառանգը դրած է մի այլ բանի մէջ։ Յաւիտեան պիտի անմերժելի մնան այն հաստատմուտ վկայութիւնքը և ապացուցութիւնքը որ անմահ Բողը հանդէս է հանել իր մինչև այժմ անօրինակ մեծ գործի մէջ այս բաներուն վերաբերութեամբ։ Եթէ այդ պիրը, քաղաքակրթութեան պատմութիւնը Անգղիայում — արդիւնք չէ Աստուծոյ մէջ, մեծամեծ ընծայեցնում ենք Մովսիսէ արեանց որ կարգան և ուսանին։ Աստուածութեան և քաղաքակրթութեան անունով չէ արդարանում դարձեալ, որովհետև այդ բաները ոչ միայն կախում չունին եկեղեցիներէ տարբերութիւնից, այլ և բան կրօնի խակութիւնից, որ անհամեմատ գերազանց է քան թէ Կրօնականների քաշկռտուկ վայրաթռուածութիւնը։ Թող-

Նեղով ուրիշ ամէն վկայութիւնք, հե-
րիք համարում ենք ասել որ կաթ-
ոլիկ Սիմէոնը ունէր լուսաւոր էր,
ունէր առաքինի և քաղաքակրթված՝
այն ժամանակ երբ Սիմեոնասի ար-
ձանը զրկված չէր իւր նիզակից,
քան թէ այժմ, երբ նիզակի տեղ
Սիբրատոս հինգերորդի տուած խաչն
է բանում իւր ձեռքում իմաս-
տութեան Աստուածուհին:

Եթէ Մխիթարեանք հասկանային
Ռուսերէն և ձեռք ձգէին Վլչինսկի
Պրօֆէսօրի «Հռովմէական Պապերը
ԺԴ· և ԺԵ· դարերում» և այս
բոլորը մանրազրուպէս ուսումնասի-
րէին, այն ժամանակ Թողած ուրիշ
վկայութիւնքը՝ պիտի համաձայնէին
որ կաթոլիկ Հռովմը ոչ ունէր էր
և ոչ պատուա Այսերական կրօն-
պաշտ Հռովմից, թէ լուսաւորու-
թեան, թէ քաղաքակրթու-
թեան և թէ բարոյականու-
թեան կողմից: Տեսնում էք ահա
որ Պրօնը չէր հին Հռովմի լուսաւո-
րութեան և քաղաքակրթութեան
չարժարանը որպէս նաև նոր Հռովմի
խաւարի և ապիտութեան պատճառը:
Եթէ կռապաշտութիւնը և քրիստո-
նէութիւնը այսպէս, ո՛ւր կը մնայ
Քաղկեդոնի ժողովի ազդեցութիւնը:

Այս բոլոր պատճառներով, որպէս
ու հասարակ կրօնական վէճերը և
խռովութիւնքը նոյն և մանաւորա-
պէս Քաղկեդոնեան ժողովի անա-
դանեալ քարոզութիւնքը, մեր այս
պողպատեայ դարում, մենք հրատա-
րակում ենք այլանդակագոյն, խաւար
դարերի բոլոր այլանդակ խաւար գա-
դափարներից:

Տակաւին երկու տող:

Մխիթարեանց պապական նախան-
ձայուղութիւնը և անդատաստան ե-
ռանդը մինչև այն աստիճան պղտո-
րել է նոցա տեսութիւնը և սա-
չարեալ մոքերը, որ միշտ ժամա-
նակագրութեան ձեռագիր օրինակնե-
րի մէջ չեն կարողացել, կամ թէ
չեն կամեցել ընտրութիւն առնել:
Բայց ի սրանից անանուն Մխիթա-
եանը (թէպէտ և դիտենք մենք այդ
Մխիթարեանի անունը, բայց որով-
հետև ստորագրութիւն չկայ, ուստի
և իրաւացի չենք համարում անունը
հրատարակել, մինչև այն աստի-
ճան տոքացել է որ Քաղկե-
դոնեան ժողովի գլուխը լաց լինե-
լով մինչևոյն ժամանակ դարձել է և
Յոյներին վտառարան: Զենք նախան-
ցում Յոյներին, պատճառ այդ վտա-
տարանը արժէք չունի մեր աչքում,
որովհետև նորա վտառարանութիւնը
չէ հիմնվում ճշմարտութեան վերայ,
այլ կողմնակի ազդեցութեամբ է դար-
ձեալ Բիւզանդեան Քաղկեդոնեան
ժողովից:

Ձեռագիրների տպագրութիւնը
պէտք է լինի քանի մի օրինակ-
ների համեմատութեամբ և բնաւ ներ-
րելի չէ ընտրել կամ ուղիղ կար-
ծել այն օրինակը, որ մանաւանդ
ձեռնտու էր տպողի բանին: Եւ այս
դարձի զանազան օրինակների ճշմար-
տութիւնը պէտք է ստուգել համե-
մատելով ուրիշ գրքերի հետ և մա-
նաւանդ այնպիսիների, որ կարող էին
աղբիւր եղած լինել տպուելու գոր-
ծի հեղինակին:

Վենետիկ տպված և վերը յիշ-
ուած Վարդանի ժամանակագրու-
թեան 86 երեսում կարդում ենք հե-
տևեալը: «Կամակցութեամբ Լևոնի
որդոյ Վասլի, որ Թագաւորեաց
յետ հօր իւրոյ սմա քան և վեց,
այր առատ ի տուրս և ոչ նման հա-
ռամի, դի նա որդի Հայկ էր և
յոյժ սիրէր զՀայս»

Հառամ բառի տակ Վերապատ-
ուելին ծանօթութիւն դնում է. «Հինն և
նորըն (այսինքն հին և նոր օրինակ-
ները այդ գրքի) յաւելուն, յայտ է
թէ որով ոգով,» որ ոչ կայ ի լեզու
նոցա առատ և չլինին ինքեանք որ-
պէս ասեն:

Սրանից պարզ երևում է, թէ

Մխիթարեանը հին և նոր օրինակներն ասածը ընդունում է, որպէս Վարդանից յետոյ մի կռապաշտութեան հոգով վարակված մարդու խարդաւանութիւն։ Բայց ի՞նչ կը պատասխանէ Մխիթարեանը՝ եթէ ասենք, որ տակաւին 250 տարի Վարդանից յառաջ, երբ այդ Լևոնի խօսքն է լինում, պատմութիւնը ասում է մեզ նոյն այդ խօսքերը, որ որատես Մխիթարեանը թէնամանի յատկացած է քարոզում.

Ա.Ոչն մարդ գիտէ, որ Վարդան վարգապետը ապրեցաւ 13 երրորդ դարու կէսում. իսկ Աստեփաննոս Ա.ոդիկը 11 երրորդ դարու սկզբում։ Ա.ղաչում ենք որ ընդերցողը աչք խատուտիկ յանձն առնու և բանալով Փարիզ տպած Աստեփաննոս Ա.ոդիկի 146 երրորդ երեսը կարդայ հետևեալը «Վասիլ Թագաւորեալ ամս 19 վախճանեցաւ, և Թոզրուլ փոխանակ զորդի իւր ձևւոն, որ Թագաւորեալ ամս 26։ այր խաղաղարար և բարեխոհ ամենայն երկրի, առատաձեռն ի տուրս, և ի բաշխելն ոչ որպէս Հոռոմ. Ոչիւտ «զի չէ ավդուրիւն Հոռոմոց առատ լինիլ և ոչ յիւրեանց ձեռուն ասի առատ, այլ նա որդի Հայոյ էր և աւելի քան զՀայ առատաձեռն»։

Մխիթարեանք ոչ միայն Փարիզ տպած, այլ ձեռագիր օրինակներ ևս ունին Ա.ոդիկի ղրկից. և ոչ միայն այսչափ, այլ և նոյն իսկ Վարդանի ղրուածքի հին և նոր օրինակները պահպանին վերը չակերտներով մէջ ընկած խօսքերը. բայց վիպասութեանց հակառակ Մխիթարեանք ընդարձակ են և տպում են այն օրինակը, որ չըն՝ նէր այդ բանը։ Մեր ընթերցողը տեսնելով որ Վարդանից 250 տարի յառաջ Ա.ոդիկն է ասել այդ բանը, և Վարդանի պատմութիւնը այդ ժամանակների վերաբերութեամբ, դրեթէ արտագրութիւն է Ա.ոդիկից, արդեօք ի՞նչ կարծիք պիտի ունենայ բուն այդ ծանօթագրիչը Մխիթարեանի ոգւոյ մասին. արդարև չատ դժուարաւալի խնդիր է այս։ Ճշմարիտը ասելով, եթէ մենք լինէինք ընթերցողի տեղը, ասլա խոկայինք «Մխիթարեանն յապտակ, քաջայայտ խակ է թէ որով ոգւով, որ ոչ կայ ի շիզու նոցա առատ և չինիկ ինքնանք որպէս ասանն։

Ա.հա թէ գիտութեան որքան վնասակար է պզտոր նախապաշարմունքը և կռապաշտական նախանձայուզութիւնը։ Եթէ վարդ և գրեթէ ջնջին բաների մէջ այսպէս, որ բնաւ Մխիթարեանց դաւանութեանը չի դիպչում, որչա՛փ ևս առաւել այն բաներում, որ հակառակ է սա՝ պահանութեան։ «Որ ի փորուն ա՝ նկրաւ է՝ ի բազին հաւատարի՞մ լինի։» Մէթէ փոխա՞ւմ է ինձը իւր խայտուկները։ Իրաւ որ «որդի մարդ եկեալ գառանիկէ՞ արդեօք հաւատա յերկրի»։

Ինչ որ Մխիթարեանք մինչև այս օրս ապրել են, ամէն տեղ այս խարդաւանակ հոգին է եղել նոցա առաջնորդը, մինչև անգամ բառաբանին մէջ։ Ա.նցեալները մի բարեկամի մօտ տեսայ Զամչեան երեք հատոր պատմութիւնը, որի առաջին հատորի առաջին երեսում մեր Լուսահոգի Եփրեմ Կաթողիկոսը իւր ձեռքով (ըստ որում ստորագրութիւնը և հինքը կայ) գրել է Սաղմոսի հետևեալ խօսքերը. «Պատմեսին անօրէնք զխորհուրդս, այլ ոչ որպէս զօրէնս քո։» Կատարեալ իրաւունք է ունեցել է Սրբազնագոյն Հայրապետը։

Եթէ սխորժելի չէ Մխիթարեանց այսպիսի բաներ լսել, թող խարդախութիւնը իւրեանց բան ու գործ չդնեն և թող ուսանին պատկառել ճշմարտութեան երեսից։

Մխիթարեանք որոշեալ դիտաւորութեամբ ընտրելով տալել այն օրինակը, թերի են գտանվել այլ

պատմութեան նաև այլ տեղերում, որ թէև մեր համառօտութեան սահմանը բնաւ չէ ներում մեզ, բայց մի օրինակ ևս ցոյց տանք այն բանին, որ Մխիթարեանց տպագրութիւնը և լուսաբանութիւնը անչըքջանելատ է։

Վարդանի պատմութեան երես 72 կարդում ենք. «Եւ լուեալ զոյս «Սրբլևելէը, հրամայէ Մահմէտի ե«լանել ի Հայս, որ էր զօրավար «նորա, զոր լուեալ Սահակայ ի կա«պանան՝ դրէ աղաչանս, զի հրա«մայեսցէ Նմա Մահմէտ առ ինքն «դնալ, որ և հաւանեալ ի խաւսան «և հիւանդացեալ գրէ առ նա ապա«չանք թողուլ զոր արարին ընդ «նորա Հայք. զոր ընդերկեալ Մահ«մէտ զդիրն Սահակայ, չիջոյց լըզ «բարկութիւնն իւր և ոչ եկին չարու«թեամբ յաշխարհս։»

Վերապատուելի հրօնաւորը ծանոթարանում է, «Հին օրինակն յաւելու. ինձանք գիտեայ ոմն ահիրապետ ասեմ, որ չոգաւ առ նոս Սահակ և գրեաց նմանակ հաչուութեան և հանդերձ տուրք մատնով նորա առաքեայ յերկիրս։»

Մխիթարեանը որ բոլորովին տարբերակ խնդիր է հանում Հայոց տուած հարկի մասին, միմիայն այն պատճառով, որ հասկացնէ Հայերին թէ ինչը տեղեկութիւն ունի Արաբական ոսկիների մասին (1)։ Մեզ թըւում է թէ առաւել խելացի եղած կը լինէր, եթէ վոխանակ զրպա իւր տպագրած ձեռագիրը ընտրէր և այդ կերպով, տիկն ժամանակ ուղիղը որ պէտ ծանօթութիւն ուրիշ օրինակներից բերել չտխրվէր։

Սմենին յայտնի թէ վերը յիշ-

(1) Որպէս ցաւում ենք որ այս ծանօթութիւնը գրելու ժամանակ Վարգանի գիրքը չկար, այլ նա մեր ձեռքում։ Երկու օր սրանից յառաջ բազմաթիւ բարեկամք խոսնադոչին ա ղաղակներով իմ վերայ գալով, բռնի յափրըշտակեցին այդ գիրքը որ տանին կարդան։ Արդեօք գրքի բրդգված կտորները պիտի չետ ըստանամ. այդ մասին ևս տարակոյս ունիմ, որովհետև նոցա տանելը ողվորական տանելու նման չէր և մինչև սենեակիցս դուրս գնալը արգէն մի քանի անգամ խելոցին իրարու ձեռքից։ Բայց ծանօթութեան խորհուրդը կարող

վում է թէ առաւել խելացի եղած կը լինէր, եթէ վոխանակ զրպա իւր տպագրած ձեռագիրը ընտրէր և այդ կերպով, տիկն ժամանակ ուղիղը որպէս ծանօթութիւն ուրիշ օրինակներից բերել չտխրվէր։

Սմենին յայտնի թէ վերը յիշ-

ենք լցնել, Վարդանը մի տեղ խօսում է Հայոց վճարած հարկի մասին, Մխիթարեանը իւր դրամագլխական ծանոթութիւնը գնելով և հազար տարի առաջ վճարած գանձանքը այս օրվայ ֆրանքի հաչուով գնահատելով ասում է թէ մի մեծ բան չէ եղել Հայոց տուած հարկը։

Ապրի իմ Ֆինանսիստը։ Արդարև կոնսիտանտները չատ կուրախանան, եթէ տեսանեն և հասկանան այս հաշուարարութիւնը։ Ինչ հարկաւոր է մտածել այն պայմանների վերայ ե՞րբ վճարում էր այդ հարկը, ե՞րբ աւելի ծանր էր վճարում մի ոսկի քան թէ այս օր հարիւր ոսկի, ե՞րբ այդպիսի հարկեր վճարելու համար ստիպվում էին "ընդ բոլոր աշխարհս (Հայոց) հինդերորդել զամենայն երամս ծիոց և զանդեայս արջառաց և գհոտս ոչխարաց», (Ցամ. կաթ. երես 212 — 13)։ Էհ, ինչ խօսես այդպիսիների հետ։ Մենք եթէ կանոնաւոր կերպով և համակարգաբար քննելու լինենք Մխիթարեանի գրածները, պիտի ստիպվէինք երկու երեք անգամ աւելի չատ գրել քան թէ նորա գրածը. կարժէ՞ը այդպիսի աշխատութեան միմիայն գիտութեան արտաքին հետաքրքրական մարդերին պատասխան տալը։ Մեզ ատ. քով գլխով կոնտեանին յանձնեցինք Մխիթարեանի այդ գրուածները։ Խերը տեսնէ։

Բայց որպէս չատ զուարճալի նորութիւն յայտնում ենք մեր ընթերցողին, թէ Վերապատուելի Ֆինանսիստը քաջ առողջաչխ և աքանչելի երկարաչունչ է նկատվում։ Սեպտեմբերի սկզբի կողմն է գրել, ուր տարին տասներկու ամիս օր ու գիչեր միչտ հաւասար են. Վարդանը մի տեղ ասում է թէ Հնդկաստանում երկիր կայ, ուր տիւ և գիչերը հաւասար են. քաջազօտի Մխիթարեանը սրբագրում է իւր ծանօթութեամբ Վարդանի սխալը թէ Ասիական Հնդկաստանում այդպիսի տեղ չը կայ, այլ սխտոր է խմանալ Սեպտեմբերեան կողմները։ Կեցցէ իմ երկրաչափը, ապրի աստեղաբաչխը։ Բայց չէ՞ կարելի արդեօք խնդրել թէ ո՛ր կողմն է այդ։

ված անցքը անցել է Սահակ Գ. Կաթողիկոսի և Մուհամմէտ Ողբայի օրով։

Մուհամմէտը և Ողբան չէ պիտոյ ըստ եւտիքոսի չփոխել և ոչ ըստ Նեստորի բաժանել. այդ երկու անունը ևս անչփոխ ու անբաժանելի միաւորված են մի անձի մէջ։

«Այս դէր ձեռին խնդ Սահակայ Հայրապետին Հայոց առ զօրավարդ Մուհամմէտ, » այսպէս սկսել յառաջ տանում է Սահակ Կաթողիկոսը իւր նամակը. նշանակում է թէ այդ մարդու թղթատուբեան անունը Մհմմատ է, և այս մասին աարակոյս չկայ։

Բայց և Մոսկուա տպած Յովհաննէս Կաթողիկոսի Պատմութեան 54 — 55 և կարդայ «իսկ Սուրբ Կա-
«թողիկոսն Հայոց Սահակ դեռ ևս
«կայր կենդանի ի Գամսոկան. իբրև
«լուաւ զանհնարին ապառնոյնն Ող-
«բայի՝ խնդրէր հրաժեշտ ի նմանէ
«երթալ առ նա . . . իբրև չոգաւ
«ի Խառան իսկ և իսկ հիւան-
«դացաւ սուրբ Կաթողիկոսն հի-
«անդութիւն մեծ։ Եւ ապա գրէ
«նամակ ապաչանոյ առ Ողբայ ի-
«րով իսկ ձեռամբն։ Եւ ապա զայն
«հրովարտակն հրամայէ յետ վախ-
«ճանի իւրոյ դնել յաջոյ ձեռին ի-
«րում, զի ընթերցին Ողբայ եկեալ
«առցէ ի ձեռաց նորա . . . . իսկ
«ասիկեանն Ողբայ . . . իբրև չոգաւ
«վաղվաղակի առ դիւրագրիկ մար-
«մին առնն Աստուծոյ մոռեալ . . . և
«առեալ զնամակն ի ձեռաց նորա
«ընթերցեալ՝ ասէ։ Այո, լանգիր քա-
«հանայիս է պատուական այրդ
«Աստուծոյ, և նամակ ի նախարա-
«րըս Հայոց գրեալ և հանդերձ
«սուրբ մարմնով Հայրապետին ի Հայս
«առաքեալ բազում պատուով ևայլն։»

Պարզ է արանից որ Ասիկեանի մահ-
կանացը Ողբայ է և մինչ որ Մխի-
թարեանը դնում է ծանօթութեան
մէջ կարծէ ի յայտնի գրածը
լինի և ոչ անհաւատ յաւելուած, որով-
հետև Յովհաննէս Կաթողիկոսը, որ
գրեթէ պարտ ու կէս յետոյ տալեցնաւ
այն անձքին, պարզապէս Ողբայ է կո-
չած ասիկանեան. Յայտնի է թէ Վար-
դանը յօդուտ փոյած կը լինէր Յով-
հաննէս Կաթողիկոսի պատմութիւ-
նից (1)։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆ

Լոյսպիկեն բարեկամէ մը նամակ մը առայանք, յորում վերջին պատ-
րաստին վրայ հետևեալ խորհրդա-
ծութիւնը կընէ։ «Զգիտեմ թէ մեր
հայ լրագիրները նոր ատարած պատ-
րաստին վրայ ինչ կարծիք ունին. ա-
նոնցմէ մէկը միայն ձեռքս անցաւ, ո-
րուն կարծիքը այս մասին շատ երա-
խտալուր է։ Մեր խմբագիրներէն
շատերը այս գործեղ ու աշխատիլս այս
քաղաքակիրթ ազգին մտաւոր կեան-
քին վրայ գէթ թեթև գաղափար
մը չունին։ Նոքա իրենց աշխարհա-
տեսութիւնը ըստ մեծի մասին դա-
տարկ Ֆրանսիական լրագիրներէն
հանելով՝ կերեւակայեն թէ կարող
են Եւրոպական անցքերու հիւտ պատ-
կեր ներկայացնել և անոնց խորհուր-
դատար նշանակութիւնը հասկացնել
Հայոց ազգին։ Մենք հայ երիտա-
սարդս որ չեզած ենք այստեղ և ի-
մօտոյ կտեսնենք և կլսենք ինչ որ կը
կատարուի մեր առջև, կարեկցական
ժպիտով կարդացինք այն թերթի փո-
խիմբական տեսութիւնը՝ որ միամիտ
ազգասիրութեան արդիւնք է։ Թշուառ

(1) Ծ. Խ. Մեզի այնպէս կը թուի որ թէ յօդուածին և թէ ծանօթութեան վերջը կորսուած ըլլալու է։ Կարելի է որ կորսուած մասն ալ օր մը գտնուի և հրատարակուի, առ այժմ ինչ որ ձեռքերնիս անցաւ՝ այն հրատարակեցինք։

Ֆրանսայի վրայ մտածելով՝ մարդուս սիրտը՝ մանաւանդ հայ մարդու սիրտը՝ կպրտի, և այս չատ հասկնալի է. բայց մարդկային ցաւակից թիւնը ջոկ բան է և անհաչատ քննութիւնը ջոկ։ Գերմանացիք նոյն օգուտը քաղելին իրենց անօրինակ յաջողութենէն, ինչ որ առաւել մեծ չափով քաղելու էին Ֆրանսացիք, եթէ ինքեանք յաղթող հանդիսանային այս սարսափելի պատերազմին մէջ։ Մեթէ տգիտութիւն չէ՞ «բարբարոս» անուանել այն վհատաւոր ազգը, որ իր տունը քանդելու դիտաւորութիւն ունեցող գոռոզ և այժմ պարտուած թշնամուն դէմ այնպէս վարուեցաւ, ինչպէս որ Ֆըրանսան վարուած էր չատ անգամ ուրիշ ազգաց հետ իր վտանգ ժամանակին։ Պէտք չէր պատերազմ սկսել անպատրաստ, թշնամու երկրին, վարք ու բարքին, մտաւորական և նիւթական ահեղ զօրութեանը ու ռազմավրական ոգուն անտեղեակ. թեթեւամիտ Ֆըրանսացիք ինքնահաւան մեծամտութեամբ անարգեցին Գերմանիան և դուրս ելան նորա դէմ ջախջախելու։ Այժմ ինքեանք պարտուեցան և պէտք է որ խոհեմութեամբ հետեւանքին և ըստ պարտութեան մէջ փրկութիւն որոնեն։ Ո՞ր չարաղետ պարտութեան պատճառը տգիտութիւնն ու թեթեւութիւնն էր, իսկ Գերմանացոյց յաղթութեան բուն պատճառը՝ սոյն դպրոցներն էին, լուսաւորութիւնն էր։ Յաւելով Ֆըրանսայի վրայ՝ ես կցանկամ ի բոլոր սրտէ որ նա օգուտ քաղէ այս դասէն ու խելքն ու միտքը հաւաքէ, իր վիճակը բարեփոխելու աւազակներու ձեռքը չդնէ. իր վտանգը պատերազմական դաշտերու վրայ չորոնէ և ձմեռնային ըստ ատենի պատերազմական դիտութեան կանոնաց չսկսի։

Մեր խմբագիրները բնաւ չեն հաւնիր որ զԳերմանացիք վար զարնելով, նոցա արժանաւորութիւնը ուրանալով, նոցա դէմ տեսլութիւն տարածելով մեր ազգին մէջ, — մեծ վնաս կը պատճառեն Հայոց ազգին. քանզի այդպիսով կը հեռացնեն Հայոց ազգի սիրտը Գերմանիայէն, մինչդեռ մեր յառաջադիմութեան և ազգի վերանորոգման միջոցները Գերմանիոյ մէջ որոնելու ենք։»

1871 մարտ 14/26 Փ. Վ.

Լայպցիկ

Մեր բարեկամի նամակին առթիւ հարկ կը համարիմ քանի մը խորհրդածութիւն ընել։

Նամակին Գերմանական ուղղութեան վերաբերեալ միտքերը նոր ևն Տաճկաստանի համար, բայց Ռուսաստանի երիտասարդութիւնը վաղուց արդէն ծանօթացած է այդ գաղափարներուն և իր քայլերը ուղղած է դէպ ի Գերմանիա։ Մենք մտածով տեսեր ենք թէ քանի որ Ռուսաստան գաղափարական ազդեցութեան տակ էր, լուսաւորութիւնը այնչափ քնդհանրացած և ժողովրդեան գաղափարները այնչափ ի դրական ուղղութիւն չէին ստացած։ Թէ ինչ նշանակութիւն ունի իրական բառը ազգային դաստիարակութեան և ուսմանց մէջ—հոս տեսակէտն բնաւ չէ հակադրուած։ Ս. Մերիվալի, Ս. Ջիվոյ և նոյն իսկ Գաղղիոյ ընտրեալ խուռներն աչքերը սրդէն բաւական ժամանակէ ի վեր Գերմանիոյ վրայ դարձած են. իսկ Տաճկաստանի ուսեալ Հայերուն մեծ մասը իրենց Պօլիսէն և Փարիզէն զատ՝ աչխարհիս ուրիշ կողմերն ու ազգերը իրենց ուշադրութեանը անարժան համարելնուն՝ տակաւին նոր նոր կը ծանօթանան Գերմանական ուղղութեան, այն ալ վերջին ահեղ պատերազմին շնորհիւ։ Եթէ այդ պատերազմը տեղի ունեցած չըլլար, երկար տարիներու մէջ ահագին հատորներու հրատարակութեամբ անդամ կարելի չպիտի ըլլար այնչափ շուտով և ըմբռնելի կերպով հասկցնել Հայոց ազգին Գերմանական ուղղութեան գերազանցութիւնն ու կենսական ոյժը։ Ա՛յն ծնողք՝ որ երկիւ Գերմանիոյ անունն անգամ չէր գիտեր (մեղադրելու համար չենք ըսեր), այսօր իր զաւակը Գերմանիա խրկելուս, Գերմանիոյ վերադարձնելուս վախով կը սպասնէ. իր վախերուն չարժանանալը ինչ ալ ըլլայ, քննող մտաց գործը՝ հայ հասարակութեան մտաց այս նոր ուղղութիւնը տեսնել, քայլայերել և ուշիւշ դիտել և հասկել է որ այս ալ վերջ ման չառնի, ինչպէս որ ըրած է գաղղիական ուղղութիւնը։ Ա՛նկէ նախ ալ դիտնալու ենք որ հայ ազգն իր նախնական կրթութիւնը անպատճառ իր ապագային վարժարաններուն մէջ ընդունելու է լաւ և հասարակաց ուղղութեամբ, և այնուհետև բարձրագոյն կրթութիւն ստանալու համար միայն պէտք է ուրիշ ազգաց դիմենք, և գլխաւորապէս Գերմանիոյ և Ջուիցերիոյ։ Բարձրագոյն ուսումնարաններ հիմնելու երազական յոյսերով չխաբենք ինքզինքնիս, վասն զի այնպիսի մեծ հաստատութիւններ այնպիսի նիւթական և մտաւոր ուժեր կը պահանջեն որ տակաւին չունինք։ Ներկայ սերնդին պարտքը բարեկարգ նախնական և երկրորդական վարժարաններ հիմնել և եղածները բարեկարգելու համար անխոնջ աշխատիլ է. թէ՛ մեր յաջորդներն ալ այն բաները ընեն, ինչ որ մեզ անկարելի է։ Թէ ինչու համար հայ ազգն իր նախնական կրթութիւնը անպատճառ իր ազգային վարժարաններուն մէջ ընդունելու է — լանգիր մ՚ի՛կ, որ երկու լաւ քով չկրնար բացատրել։ Կը յուսանք որ մեր ազգային խմբագիրներն ալ պարտք կը համարին ըստ պարտուց պաշտպանել իւրեանց մէկ կողմանէ հայ հասարակ[illegible] մտաց ուղղութիւն։

կենսանորոգ գաղափարները սիրով ազ-
ջունել, և միւս կողմէն անոնց բուն
նշանակութիւնը բացատրելով՝ մեր ազ-
գի ներկայ վիճակին օգտաշատ ուղղու-
թիւն տալ անոնց, և ոչ թէ վայրա-
բաչ խորհրդներով խժդուժ յարձա-
կումներ ընել անոնց վրայ, յարձա-
կումներ՝ որ կարող են աւելի իրենց
տղխտութեանն ու կարճատեսութեանը
ապացոյց ըլլալ քան թէ «Հայոց ազ-
գի սիրտը Գերմանիային հեռացնել»
ինչպէս որ կը կարծէ մեր բարեկամը։

Սիրելի Ընկեր,

«Մասիս» մէջ կարդացի յօդ-
ուածս։ Եթէ խմանայի, որ դուն կը
ցանկայիր հրատարակել այն նամակս,
մոքերս աւելի ազատ կը բացատրէի և
Գերմանիոյ համար ունեցած համակ-
րութեանս պատճառները և նոյնպէս դա-
վելի արժանաւորութեանց պատկերն
աւելի կը մեկնէի։

Ամսոյս 3 ին քեզ ուղարկած յօդ-
ուածս առաջնոր արդէօք (1)։ Շատ
հետաքրքրական շարունակութիւն կարելի
էր դրել նոյն խնդրի վերաբերմամբ,
բայց ժամանակ չունիմ (2)։ Պօղոսեան
չարժմունքը գնալով աւելի սաստիկ ըն-
թացք կառնէ և կ՚ոյս կայ, որ Գերմա-
նիայի Կաթոլիկները միանգամայն չը-
ռամին կը բաժնուին և առանձին ազ-
գային եկեղեցի կը կազմեն։ Տէօլին-
կերին աւելի թուանա և ազատ ձայներ
կը լսուին այժմ, որը Պապի դէմ ոչ
թէ նորա նման՝ ատանդութեան և ե-
կեղեցական ուսման հիմքերով կը մար-
տնչեն, այլ նոր գիտութեան և բա-
նականութեան դէնքերով։

Ես դուն կարող ես երևակայել, թէ
ինչ եղբարական ջերմութեանց կուգան այս
քաջերը։ Նոյնս համար Անհամբերու-
նութիւնը և այլ ճիղուիտական չատ-
կութիւնները Պապական եկեղե-
ցւոյ մէջ տրուած փրէվիանեներու (նախա-
պատրաստական) օրինական հետևանքն են և
իրենց այդպիսիք Կաթոլիկներու կողմէն
ընդունելութեան արժանի. իսկ եթէ
չեն ուզեր ընդունիլ, ապա պարտաւոր
են ոչ թէ այս և այն մանաւանդ տօգմայի
և ճիզուիտական փոխանակներու դէմ մա-
քառիլ, այլ բանդագակ Կաթոլիկու-
կան սկզբի դէմ, վասն զի Պապի և
ճիզուիտներու արարմունքը նոյն սկ-
զբի բնական արդիւնքն են։ Շատ հի-
անալի յօդուածներ յերևան կելլեն ա-
մենայն օր այս խնդիրներու վերաբեր-
մամբ, որք և մեր Հայերուն օգտաւէտ
կարող կրնան լինել, բայց սիրտս վրդ-
մանել և կամ սիրտի վրայ տեղե-
կութիւն տալ։ —

Կարելի էր ծայրէ ի ծայր լռինել
թերթս, եթէ ուզեի յիշել այն մար-
դոց անունները, որք թէ զանազան
կառավարութեանց և թէ մանաւանդ
ժողովներու ու դպրոցներու ձեռքով
ուղարկուած են Գերմանիա՝ սորա
վարժարաններն ի մօտոյ տեսնելու և
մանկավարժական հարուստ գործա-
նէութիւնը ճանաչելու համար։
Միայն Լայպցիկի մէջ հարիւրէն աւելի
օտարազգիներ տեսայ այս կարճ միջո-
ցին, որք յատկապէս տեղւոյս ղբաղ-
բոյններն ուսումնասիրելու և Գերմա-
նական մանկավարժութեան անհամե-
մատ ճոխ գրականութեան վրայ գա-
ղափար մը առնելու մտքով եկած են
և հանապազ կուգան։ Սիրտս ա-
րդէն է երբոր լուսաբերակ երկիր-
ներէն եկած օտարազգի վարժապետ-
ներ կը տեսնեմ. բայց չես կարող ե-
րևակայել, թէ ինչ գոհ վիշտ կը
սրբէ հոգւոյս, երբոր ամենայն օր
Յոյներ, Ռուսպարներ, Չեխեր, Ռու-
միններ, Սերբեր և մինչև անգամ
Բուլղարներ կը տեսնեմ և ուշ մի Հայ
մանկավարժ չի հանդիպիր աչքիս...

Յատուկ պիտի թուի ձեզ ուրեմն

(1) Ցօղնեղի նամակին վրայ է խօսքը, որ Երկրագնտիս 8ի թուին մէջ հրատարակած ենք արդէն։

(2) Պետի խնդրենք մեր բարեկամին որ ժա-
քանակ ունենայ, — Տ. Խմբագրութիւնք։

ազգերն իրենց բախտի դէմառար. հիմունքն իրաւամբ մանկավարժութեան մէջ կորանեն։ Բայց ինչ տեսակ մանկավարժութեան. — արդի ժամանակին ծանր պահանջմունքներուն համապատասխանող «ուսումնական մանկավարժութիւն» մէջ։ Եւ որովհետեւ այս տեսակ մանկավարժութիւնը բուն Գերմանական գործ է և գէմառարտէս սոյն վարժապետներու ջանիւք կը մշակուի և որովհետեւ ազգային ուսումնարանները ճշմարիտ օրինակ ու տարրող կարող են համարուիլ մեզ ազգայ դպրոցներու առջեւ, ուստի և շատ բնական է, որ ուսուցչութեան ճամբով իրենց երկրին նպատակ կանգնող հայրենասէր օտարականները նախ և առաջ Գերմանիա կուգան և հոս դարմանի կը փնտռեն։

Հայոց լուսիրները միշտ լիքն են այլ և այլ ճառերով կրթութեան օգտի վրայ. թերեւ մը չկայ որ մերթ չսրամով ու մերթ արձակ բանիւք յօրինեալ շարականներ չիարդայ ի փառաւորութիւն և ի գովեստ դաստիարակութեան։ Ուսուցչական խոհանոցները, վարժապետները, հեղինակներն ու բանաստեղծները իմի բերան կը քարոզեն, թէ ուսում հարկաւոր է, թէ արդի ժամանակին ազգի բարօրութիւնը միայն լուսաւորութեամբ կրնայ կը բերուի, թէ մանուկ սերնդին դաստիարակութիւն չտալը նոյն է թէ մորդասպանութիւն ևսլլն։ Ժողովուրդը կը լսէ նոյս ճայնին և սրտի մեծ կը զոհէ ինչ որ կարող է յօգուտ ուսման։ Կը տեսնենք որ ամէնուն տեղ դպրարաններ կը հաստատուին, վարժարաններ կը հիմնարկին և դաստիարակութեան վրայ զրուցքն ու հոգ տանելը տեսակ մը պատիւ կը համարուի խաւարասպաչին և միաոտակար մարդու անուն կրել չուզեղող ազգայնոց մէջ։

Ամենքեան ուսանելու միտիսպ կը յայտնեն և յառաջադէմ ճգտութեամբ իրենց արուեստան դպրոցներէն պանտանուելով՝ ընդհանուր լուսաւորութեան գործին օգնելու կաշխատին։ Մեր ազգն ի վաղուց անսի ստանձն ունէր և դարեւոր ծանր տառապանքներուն չնայելով՝ մինչեւ և այս օրս դեռ կենդանի պահած է այս սէրը, և Հայերու վրայ որքան և խղճ տեղեկութիւն ունեցող Եւրոպացի մը չկայ, որ նոցա ուսումնասէր բարքն ամենայն իրաւամբ չգովէ։ Բայց մը քան պէտք է յայտնել, որ մեր ուսումնասիրական ճգնութեանց արգասիքն այսպէս վանաբի են. մրքան հոգատարութիւն, որքան եռանդ, տղմուկ, զոհաբերութիւնք, երկունք և ինչպէս սակաւ արդիւնք։ Քաջ գիտեմ, որ ազգային լուսաւորութեան առաջարկի վրայ անկարելի է յառաջ վազել չըգեկաւքի արագութեամբ և մանկավարժական աշխատութեան պտուղները շատ ուշ կը հասունանան. սակայն և այնպէս, ո՞վ կարող է ուրանալ թէ մեր վարժարաններու գործունէութեան հետեւանքը գրեթէ ոչինչ է, և թէ ի միտ առնուելք նոցա համար տարուած ջանքն ու նոցա վրայ ղրուած ազգային յոյսերը։

Ի՞նչ է այս տրտում երեւոյթի պատճառը։ — Այն է որ մեր մէջ արդի մանկավարժութեան (մետոդոլոգիայի) տարերքն անգամ դեռ յայտնի չէն։ Դաստիարակութեան մասին Հայերէն հրատարակուող ճառերու մէջ ոչ ոն քան կարելի գտնել — և հայրենասիրական ջերմ յորդորներ, և վսեմ ղգայմունք և գեղեցիկ խօսքեր և ճարտասանական ղրուն ու չքեղ ձեւեր, բայց մանկավարժական սկզբունք — քաւ լեսյ։ Թէ ինչ նպատակներ պիտի ունենայ Ազգային Վարժարանը, թէ ինչպէս պէտք է դաստիարակել ու կրթել, թէ այլ և այլ դիտողութիւնքն ինչ եղանակներով պէտք է հաղորդել ի դպրոցի կազմութեանն ինչ

հիմանդ վրայ պէտք է հաստատել, այս և ուրիշ այս տեսակ հարիւրաւոր խնդիրներու վրայ զատատական մը չեն ըսեր Հայոց Մենաորներէն։ Ա.յսու ամենայնիւ այս խնդիրներէն իւրաքանչիւրը իր զատատութիւնն ունի, ամէն մէկին զարգման համար երևելի մանկավարժներ իրենց կեանքը զոհած են, և մեզ պէտք է միայն աշխատութիւն յանձն առնել նոցա տրդիւնաւոր գործունէութիւնն ուսումնասիրելու, որպէս զի կարողանայինք օգտել նոցա առած դասերէն։ Բազեդովի, Բաթիդի, Կոմենիուսի, Պէստալոցցու, Կամիկի, Ֆրէօբէլի, Նիմայերի, Հարնիչի, Գէհֆկի, Դիստերվէկի, Կարլ Շմիդթի, Սոցի, Յիլերի, Լիբէնի, Բերթելթի, Կեհռի, Գիթէխ նման բազում մեծահամբաւ Գերմանացի դիտնականք ի սէր և յօդուտ մարդկութեան ճիգ թափած են և կը թափեն մանկավարժութեան դաշտին և մանուկ սերնդի վրայ և այսպիսով ազգի բարօրութեան համար ճամբաներ կը բանան։ Ա.րդեօք չգիտեն նոքա մեզ դէմ ըստ անուան — ոչ. ո՞վ թաղունք նոցա անթիւ ընտիր գրուածները, յորոցմէ ամէն մին մանկավարժական գիտութեան ճոխ դանձարան է։ Գերմանիայի մէջ այժմ 120 հատ յատկապէս մանկավարժութեան և դպրոցական խնդիրներու մշակութեանը ծառայող մասնաւոր լրագրիներ կան, և մեր սիրելի հեղինակները, որ գեղեցիկ ճառեր կը գրինեն դաստիարակութեան մասին, դէմ թեմէ դաղափար մ'ունին Գերմանացոց այս հրանալի դրականութեան վրայ։

Որ և իցէ վարժարանի բարգաւաճման համար շատ պայմաններ հարկաւոր են, բայց առաջինը չկայ, որ բոլոր պայմաններէն ամենագլխաւորը մանկավարժաբար կրթուած հմուտ դաստիարակներ ունենան է։ Ա.ռ մեզ դժբաղդաբար Ա.զգային հին ուսանդութեանց խչխանութիւնը դեռ կը տիրէ մտքերու վրայ և վարժապետ կոչուած մարդու վրայ ամչոծն ու յարգը տակաւին պարզուած չէ ժողովրդի մէջ։ Հայոց ազգի մեծ մասը դեռ այն մտքի է, թէ վարժարանի համար զրաղ գումարելով, տան պատերը կանգնելով իր արքային պատասխանութիւնն նոր սերնդի վերաբերմամբ արդէն կատարած է. իսկ թէ որի՞ն պէտք է յանձնել վարժարանը, ա՞յլ ալիսիլնի մանկուցն առաջնորդը — այս բանին վրայ վոյթ չի տանիր և կը կարծէ թէ ամէն մէկ Տիրացու կամ Տէրտէր և կամ որ և իցէ զպրոցի մէջ ուսում ստացած երիտասարդ կարող է նոյնն վարժապետ դառնալ։ Բայց այս չատ սխալ և վերին աստիճանի վնասակար կարծիք է։ Ուսում քարոզելով, ուսման օգուտը գովելով մեք կը յանկանք, որ իւրաքանչիւր մանուկ օրինաւոր քան առվորէ, իր ամէն բարոյական զօրութիւնները մշակէ, լուսաւորեալ միտք, հաստատուն կամք և բարոյական կարգավորութիւն առանայ, որպէս զի անկախ, գործունեայ, երջանիկ կեանք վարէ և ազգին օգտաւէտ անդամ դառնայ։ Բայց այս տեսակ կրթութիւն հաղորդելու անձեռնհաս են վերոյիշեալ տիրացուներն ու կիսակիրթ վարժապետները, քանզի նոքա մանկավարժական պաշտօն վարելու պատրաստուած չեն։ Գերմանիոյ մէջ, օրինակի համար, վերջին դիւղական դպրոցի վարժապետն անգամ կը պահանջուի, որ նա մասնաւոր մանկավարժական կրթութիւն ունենայ և այս կրթութիւնը հաղորդելու համար առանձին ուսումնարաններ կան, որը սեմինար կը կոչուին, ուր որ վարժապետ ըլլալ ուղղները ընդհանուր կրթութիւն առնուելէն յետոյ, դոնեայ դէռ երեք կամ չորս տարի յատկապէս մանկավարժական դիտութեան և սորան ազգակից առարկաներու մէջ տեսական և գործնական կերպիւ կը մարզուին։ Իմ հաստատ համոզմունքս այս է, և կը համարձակիմ սնդել, որ Գերմանական մեն-

կավարժութեան ճաշակը դէմ առաւ իրաքանչիւր Հայ մարդ կը հասնուցնի հետս ; թէ մեր զարգացնելն ու վարժապետները իրենց վրայ դրած պաշտօնը ամէն պիտանի կերպով կը կատարէին և իրենց աշխատութեամբ տոհմասիրական ամէն զգացմունք յառաջ կը բերէին , եթէ Գերմանական մանկավարժութեան հետ ծանօթանալու միջոց գտնէին : Եթէ մեր կը ցանկանք , որ մեր ազգը չանհետանայ աշխարհիս երեսէն , եթէ զգալով կուզենք որ նորա զարմանալի վիճակը օր մը բարւոքի , որ նա զօրանայ , այժ առնէ , զօրանայ , թշուառութեան ճանկերէն վերջապէս ազատի և ինքն իր պատիւը ճանաչելով Հայ անուանը արժանի ազգ կարմէ , ապա ուրեմն պարտաւորենք անյուսալ ծանօթանալ Գերմանական մանկավարժութեանը և նոյնանէ քան ուսանելով՝ նոր կեանք տալ մեր զարգացներուն : Այդ եթէ Բուլղարներ , Վլաշներ , Ռումէններ , Չեխեր , Սերբեր մանկավարժութիւն ուսանելու համար Գերմանիա կուգան , մինչ մեզի Հայէ՞րը բաւարարութիւն պիտի կազմեն , մինչ մեզի Հայէ՞րը զարմ պիտի ձնան Գերմանական մանկավարժութենէն , Հայերը , որք աշխարհիս վրայ դարուց ամէն ազգերէն աւելի կարօտ են նորա կենսաբեր ազդեցութեանը :

Շատ ցանկալի է , որ այս կարեւոր պիտոյքի վրայ խօսք բացուէր ազգային պարպիներուս մէջ և ընդհանուր հոգատարութեամբ միջոց մը գտնուէր քանի մը հատիկ , կարողական , ազգասէր և եթէ կարելի է՝ արդէն վարժապետական պաշտօն վարած երիտասարդներ ուղարկէին Գերմանիա : Եթէ այս առաջարկութեան անհրաժեշտ հարկաւորութիւնը և անհապեղի օգուտը մեզմէն մեամամբ պարզուի ժողովրդին , տարակոյս չկայ որ նիւթական պակասութիւն չդրացուցիչ , որովհետև բարի գործ է և մանաւանդ ազգային ըստ ամենայնի հանգամանք մեր ազգն երկար դարեր ի վեր ոչ միայն ազգային դպրոցներ չունի և Պօլսի պէս մայրաքաղաք միշտ կարող է , եթէ մեզմէն որոմով ուզէ , ի գլուխ բերել այս գործը : Եկաւոր հիւրերը նեղութիւն չեն կրեր այս առեղ . ընդհակառակն՝ սիրալիր ընդունելութիւն կը տանան : Գերմանական լեզուն նոքա կէս ատենուայ մէջ կը սովորին , խակ ինչ որ նոցա մանկավարժական կրթութեանը կը վերաբերի , այդքան մեզմէն կարող եմ ասել , որ տեղւոյս Համալսարանի մեծահամբաւ մանկավարժ պրոֆեսօրներէն մին Հայերու յառաջադիմութեանը բարիք մտածելով , քանիցս անգամ կրկնած է ինձ , թէ միշտ պատրաստ է ի սրտէ օգնել մեզ : Այս երևելի դիտնականն ոտա չինը չէ , որ այդպիսի բարեկամական զգացմունք ունի մեզ համար . նոյն սիրալիր խօսքերը շատ անգամ լսած եմ և ուրիշ Գերմանացի մանկավարժներէն : Ներա կը սիրեն զմեզ և երանի թէ մեր կարողնայինք գործակից յարգել նոցա սէրը :

Փ . Վարդանեան

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Վարժարանիս աշակերտներէն Պ . Տիգրան Սարաքեհան և Պ . Մհերան Ջըլջըհեան (առաջինը Ե . երրորդ և երկրորդը Գ . բարձ կարդէն) պատուհիրները Ջուխկերի ուղեւորելնան ատմեան մէջ կատարելագործութեան նպատակով : Ըսը յուսանք որ այս պատուհիրները այնպիսի բարեմասնութիւններով կը վերադառնան , որոնք ժամանակին իրենց հատակակցայ սրտին մէջ ալ նոյն ճանապարհին հետևելու փափագ և բարի նախանձ կը շարժեն : Այդքն հասկացած են նոքա թէ որչափ մեծ է իրենց պատասխանատուութիւնը թէ իրենց ծնողաց և մերձաւորաց և թէ ամբողջ Հայ Հասարակութեան առջև , զանո

զի Հասարակութիւնը իրենց կենդանի օրինակին դաստիարակ սիրտ ստանայ եւ ինչ է Ազնիւ ընկերական ուսումն ու կրթութիւնը :

Պ. Տիգրան Աբաքելեան հրաժեշտի մէջ հետեւեալ խօսքը ուղղեց իր ընկերոջ :

Եղբայր իմ,

Մարդիկ վայրենի Հոմենոմէն սկսեալ մինչեւ ին լուսաւորեալ Եւրոպացին՝ առաւել կամ նուազ ձգտում մը ունին դէպ ի կատարելութիւն, ձգտում մը որ անընդհատ խոյով է խըթանէ զբանականութիւնն, եւ այս ձգտման զօրութեամբն է որ մարդկութիւնն չի յանձիկը, չի յուսահատիր բնաւ, միշտ նոր կուզէ, նոր թէ ի դաստիարակ եւ թէ ի գործս : Այս ճշգառմն Աստուածային օրէնք մ'է որ մարդս իր արժանաւոր կոչմանը կառնչորդէ : Մի՞թէ Եւրոպան 1—2 դար, կամ նոյն իսկ տարի մը առաջ այն Եւրոպա՞ն էր . մէն մի դար կեանքն ու մահ միանգամայն կրէ ի ծոյին, մէն մի դար իր յատուկ գործառնութիւնն ունի, որք աւերեն ու չինեն : Հետեւ Խոտոյ մայրաքաղաքն եղաւ, և Պատութեան՝ այն դարերուս անգութ և անողոքելի դահիճը իր ճգնաժամին մէջ տապնալի, և մերթ է այն երջանկաթիթ ժամը ուր աշխարհն բոլորովին սիրտ կերպարանափոխի, ուր մարդկութիւնը սիրտ վերածնի, և գիտութիւնք ու արուեստք, որ ցայսօր առանձնաշնորհութիւններ են կարծես, սիրտ տարածին յանդամ աղատորէն հիւղակին ցոփաստ, յԱրեւմից յԱրեւելս : Ցեղատոհել միշտ, յեղափոխել ի բարին, յեղափոխել ի գիտութիւն և ի վեհեմ, — առ այս է ընդհանուր մարդկութեան և մարդուն ծրագրումը և քան այսմ ընդհանին ու գըլնան ազգ և ազինք հասնին : Բայց Հայն, ա՛հ, ի գետ, միշտ ի գետ սիրտ յանգին բոլոր խորհրդածութիւններս, սիրելի ազգս, Հայն, դառնք որոյ կըսեմ, այն վերջին գահավիժ անկումն հետէ, որոյ վրայ տարիներ անցան դարեր կազմեցին, այն մեծ ազգը, եմէ փոքր ինչ յառաջադիմութիւն ըրաւ, այն ալ վաքրիկ մանանոտութիւն մ'է : Հայն գետ իր անցեալ փառաց դրութիւնն բոլորովին ի բոյ մերժելու քաջագործութիւնն չունեցաւ . չկրցաւ գետ ինքզինքն դնել այն չաւղին մէջ՝ ուր Եւրոպիոյ ազգերըն ընթանան . խօսիլ մը միայն սովրեցաւ, իսկ գործե՞լ, արդիւնաւոր դործել, յարատեւ գործել — մ'է : Գըլուխնեը կանգնեց, և գետ ընդհանուր կրթութեան մեծատ մը չունի . գըտնուեցան մարդիկ, որք մեծամեծ խոստումներով իր զաւակաց ապագան դաւեցին, և կարծեցեալ թէ նման որք զայն բարւոքել կը ճգնին և ի վարձատրութիւն կ'անարգուին, որ ազգի մը տգիտութեան են մեծ ապացոյց է : Յուսալի չէ՞, եղբայր իմ այս . գետ շատ սիրտ ունէ Հայուն այս վիճակին, ըստ իս, մինչեւ յայնժամ կըսեմ՝ ուր նախապաշարմունք սիրտ գլուխն Հայուն հոգւոյն վրայէն, ուր Հայն սիրտ գաղղի իր էն նուիրական կաշեմը կեզծ և անտոհ սովորութիւններուս մէջ խեղդելէ, ուր մանաւանդ Հայ մանուկն այլ ևս չսիրտ լըսել ոճիր ոճրոյ գպրոցական խորչերուն մէջ անխընամ, ուր սկզբունքներն սիրտ ընդհանրանան ի Հայս . ուր, և որ քան զամենն կարևորն է, գաստատութեան սրտագան և փառուկ պաշտօնը իր արժանաւոյ պէնիթը սիրտ հասնի . — Հայն այն ատեն երջանիկ սիրտ ըլլայ, եմէ աշ սև է միշտ Հայուն ապագան, սև է և մնայ, որոյ պատասխանատուութիւնն մեր խղճին վրայ սիրտ ծանրանայ :

Աշխատիմք, եղբայր իմ, 19երորդ դարը Հայուն համար աշխատութեան դար է, Հայուն ցոյս առաւ ընթացքը չատ դանդաղ էր . աշխատելու է մանաւանդ ի՛ր աչքերուս . կատարեալ մարդ ըլլալու համար միայն սիրտ ոչ-նուազ է,

կրնէ, բայց ոչ երբեք զանգան։ «Ան-ցեղին ճանապարհութիւնները ստորագին յարմանականները կը պատրաստեն ըստ Մ՛ուբ Միլնէ»։

Բայց մեկզի թողունք ալ այս խոր-հրդածութիւնները զրտ, ինչպէս որ տեսաք, խիստ համառօտ և խիստ ան-ճուկ բառերու մէջ սեղմեցի։

Ժամ է, եղբարք իմ, ըսի ընկերք ընկերոջ ճամբ սեղմեն գործակցօք, բարեկամք բարեկամոջ աստուածաբ և մուերիմք մուերիմոջ պատեր մխիթարիկեն ի յիշատակ սիրելի անցեալի մը, ուր այնքան ջերմ սիրեցին դիրար, ուր մերթ ընկերական, մերթ հայրենեաց քաղաքականութիւնները ողբացին միմեանց հետ և մերթ նոցա երջանկութեան երազական յոյսերովը դինուած՝ ժպտեցան կամ ատելացան։ Ժամ է որ անոյշ յիշատակներ յարձանակեալ վերացնեն զհոգիս։ Հրաժեշտի ժամ է եղբարք իմ, ահ, ու ա-ռաջին անգամն է որ այնչափ քունն և զբաղար ազդէ յիս ընկերական անոյշ սէրը։ սիրոյ բաժնեմիմ ձեզմէ, ինձ և ձեզ սիրելի մեկ ընկերոջս հետ։ այո, սիրոյ բաժնեմիմ երկուքս ալ ըս-խոսք և ուրախ։ սիրաբ՝ զի կը հետա-նամ Աստպարէ—Նուպարի և Շահնա-զարեան, մեր պաշտելի բարերարաց, նը-ւիրական յարիկն, ուր երեք տարի Ձեր սիրելի ընկերակցութեամբը միաք և սիրտ կրթեցինք ու հրահանգեցինք ; ուր Հայրենեաց ու ազգի սէրը այն-քան ջերմ զգացինք ու երդեցինք միա-տեղ, ուր այնքան առատ վայելեցինք մեր սիրելի և անձնուէր Ներսէս Սըր-բազան Հօր, բարեջան Խնամակալաց ու Տնօրէնութեան և գաստատուց վերաբեռանդ հոգին ու խնամքը, և որոյ չեմք գտնդտալիր յայտնել այսօր մեր երախտագիտական անկեղծ շնորհակա-լութիւնները։

Իսկ ուրախ, այո, ուրախ եմ զի մեր բաժանումը չէ մեկ անձնական հաճոյք մը յապեցնել, այլ ձեզ հետ ստոյգ գործին մէջ ազգին օգտակար անգամ մը ըլլալու երջանիկ յոյսերնիս լրացնե-լու համար է, ասի ուխտ մ՛է, ուխտ արքազան, որպէս մեր նախնի հարց ու դիւցազանց ուխտ մը զոր անկն Շահնազարեան ունի ի պատին. վա՛յ անոր որ պատի դրժէ իր այս ուխտին . . .։

Իրաւ է որ չատ սիրելի և ըղձալի էր մեզ զարձեալ միևնոյն յարկի տակ միևնոյն գրասեղանի վրայ աշխատիլ և ուսանիլ, բայց աւելի մեծ ոչ մը աւելի մեծ լոյս մը ի պանդխատութիւնս կը հը-բատիրէ զմեզ։

Վերջապէս պատի բաժնեմիմ, եղ-բարք իմ, սիրեցեալք, այլ ևս ո՛չ պի-տի զանի տարի պատի չը տեսնեմք զիրար. յիշեցէք զմեզ, ճամբ բարեաւ, յիշեցէք զմեզ։

Տ. Ե. Ա.

ԸՆՏԱՆԵԿԱՆ ԶՈՒԱՐՃՈՒԹԻՒՆՔ

Մալաթեանց պատճառաբանիչն մեկն ալ անչուշտ ճանճրութիւնն է։ Բնու-թեան մէջ ամէն բան՝ ինչ որ կեանք ունի՝ կը շարժի. այս օրէնքին համա-ձայն մարդուս ուղեղն ալ միշտ շարժ-ման մէջ է։ Ուղեղի շարժման պատ-ճառը ներքին կըլլայ և արտաքին, այսինքն մարդս կամ ներքին կամ ար-տաքին տպաւորութեանց ազդեցու-թեամբը կը մտածէ։ Երբեմն զանա-զան պատճառներով, որոց վրայ խօ-սիլը մեր նպատակէն դուրս է, ներքին տպաւորութիւններու ազդեցութիւնը տկարացած կըլլայ. նոյն միջոցին ար-տաքին տպաւորական տպաւորութիւն-ներն ալ մարդուս ուշադրութիւնը որ-քընդհանրապէս և դրսեւորելու չափ ազդե-ցութիւն չեն ունենար, տակէ առած կուգայ ուղեղի այն թմրած կէս քուն կէս արթմուն վիճակը՝ որուն տակաւ-կան լեզուով Ձանձրութիւն կըսենք։ Ձանձրութիւնն ալ տեսակ մը հիւանդութիւն է և բնական է որ մարդ այդ

ամենաթուժ վիճակին եղնելու միջոցներ գտնուած : Այդ միջոցները կարող չէ մարդ իր սովորական զգաստանց մէջ դտնել, վասն զի շատ անգամ անոնց՝ մարդուս մօրէն պահանջած միօրինակ աշխատութիւնն ու ճիգն է որ պզոյն կը հոգնեցնէ, կը թմրեցնէ, կամ կը ձանձրացնէ : Ուստի մարդ կը պարտաւորի աւելի, սովորականէն դուրս բաներու մէջ գտնուել ճաճրութիւնէ ազատելու միջոցները : Մարդիկ կան որ օրուան մէջ այնչափ զբաղած են և իրենց սովորական գործերը այնչափ սիրելի եղած են իրենց որ չատ քիչ անգամ կը ձանձրանան, ուստի և սովորականէն դուրս զբաղմունքներու, այսինքն զուարճութեանց կամ զբօսանոց պէտք չեն զգար . կամ եթէ սովորական գործերը դիրենք չատ հոգնեցուցած ըլլան, իրենց զբօսանքն ու զուարճութիւնը այնպիսի բաներու մէջ կը գտնեն, որոնք լուրջ աշխատութեան չվարժողներու համար բնաւ ձանձրութեան դարման ըլլալ չեն կարող :

Մնացեալը յաջորդ թուով .

ՍԶԳ

Մեծասրտութիւն Ծնողաց կը ծանուցանէ որ վախճանելին գերմաներէնի դաս ալ կը տրուի առանձին վճարքով մը : —

ՕՐԱԳԻՐ

1871 Ապրիլ 22 Խաչգիւղ

Օրագրի 420 թուոյն մէջ « Պէշիկթաշի երևոտասարդներէն մէկ քանին » տարագրութեամբ նամակ մը կար մեզ ղէմ : Ապրիլ 12ին նամակատ մը խընդրեցինք Օրագրէն որ նամակագրաց անունները անմիջապէս հրատարակէ, եթէ ոչ, — հրատարակած նամակին բովանդակութեան պատասխանատուն պիտի կը ճանչնանք : Օրագիր նամակնիս չհրատարակեց և լռեց . քանի մ՚օր ետքէ՝ Մասիսի 1077 թուոյն մէջ հրատարակեցինք զայն, և Օրագիր դարձեալ լռեց :

Օրագիր իր 417 թուոյն մէջ ըսած է . « Պէշիկթաշէն նամակ մը ընդունած ենք հրատարակելու համար . բայց տարագրութիւն չունենալուն համար չենք կրնար հրատարակել : » Այս խօսքերէն կը հետևի թէ Օրագրի ընկերակիցն է եղեր « այն նամակները միայն հրատարակել, որք տարագրութիւն ունին . » Պէշիկթաշի նամակը հրատարակեր է, ուրեմն տարագրութիւն ունի : Օրագիր կամ տարագրութիւնները երևան հանելու էր, կամ, եթէ խոտացած էր երևան չհանել զանոնք, նամակին բովանդակութեան պատասխանատուութիւնը իր վրայ առնելու էր : Իր սրտին մէջ վարդ լինչ պատասխ ըզգացած և տրիտութիւն և իր երեսին վրայ տակաւին մի ամօթ ունեցողը այսպէս կը վարուէր . — Օրագիր այսպէս չը վարուեցաւ . . . :

ՅԱՆՑ ՆԻՒԹՈՑ

	Երես
Աւետարանիչ Ս . Պատրիարք	17
Տահմանադրութեան վերաքննութեան պատմութիւնը . . .	18
Միքայէլ Նալբանեան . . .	19
Թղթակցութիւն	23
Հրաժեշտ	29
Ընտանեկան զուարճութիւն . .	31
Ս.Պէ	32
Օրագիր	32

ՏՆՕՐԻՆ Հ. ԻՓԷՖՃԵԱՆ

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱԹԱՋԻՆ ՆՈՒՊԱՐԵԱՆ
ԵՒ ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ

Ի ԽՍՏՊԻՒՂ, Կ. ՊՕԼՍՈՑ